



116. ԱԶՆԻՎ ՍԱՐԵԿ

Կէղնին-չէղնին իրիկ ու կնիկ մե:

էդ կնիկ շատ խորոտ կէղնի, աչքն կը թալե ղրկեցին, դրկեց տղամարդ լե ըդոր: Յըմեն հաղ իրիկն օր կէրթա մեշեն, ղրկեց կը ցլա ներս, կը նստին, կուտին, կը խմին, կը տկլոզնան մտնան տեղ, կուտին ղկդամա պտուղ:

էդ մարդու տան սրախի մեջ ժամանակով սարեկ մե բուն դրած կէղնի, կը տեսնա, օր չըմնօր էդ քոպակ ղրկեց ուրին կը թալե տուն, կը լկտվի հըտ կնկան, էլ չը համբերե, կըսե.

— Ես պտի թռնամ էրթամ մեշեն՝ իմ տանտիրոջ խաբար տամ, ըսիմ՝ ըշտե քու կնիկ քըղի կը խաբե, հմլա-հմլա բան կէնե:

Կըսե-չըսե՝ վըր էդ խոսքին կը տեսնա հանդե դրկեց տղամարդ էլման ուրին թալեց տուն, նստան, կերան, խմեցին, մարդն ուր շնութեն էրեց, թողեց գնաց: էս հաղուն սարեկ կը տեսնա, օր էդ քոպակ ուր գոտին կը մոռնա յողի:

Սարեկն է՝ կը թռնա, կէրթա մեշեն, կը տեսնա հանդե մարդ ծառի տերե կը կտրտե, կը թառի ճուղի մե, կըսե.

— Իմ ազնիվ տանտեր, ըպա չըսիս՝ չըմնօր քու ղրկեց տղամարդ գողու պես ուրին կը թալե տուն, քու կնկա հետ կը նստին, կուտին, կը խմին, կը տկլոզնան կը մտնան տեղ, սնչեր ուրանց կը խառվին չիրար, կը դառնան չորս յոտք:

— Տո, յա, օղո՞րդ:

— Օղորդ ու օղորդ, հլա բամ լե չեվելի:

Մարդ շատ կը կոտրվի, կսկուծ կը զարկե սիրտ, կըսե.

— Սա՛րևիկ, խուրբան, շնոխկալ իմ, իմ աչքեր կապուկ էր, դու բացիր:

Կրսե, զոտրծ կը թողե, վաղելով դիկա տուն, կնկան ըսկի բան չրսե, դըռսխորոուկ դես կիշկե, դեն կիշկե, աչք գընկնա գոտու մե, կը կդի կը վերցու, կնկան կը հարցու.

— Կնի՛կ, էս վի՛ր գոտին է:

— Գոտի՛, ի՛նչ գոտի: Քա՛, վա՛յ, ըրի քու գոտին է:

— Իմալ իմ գոտին,— կը ղարմանա մարդ,— ես հմլա գոտի չըմ ոճեցերի:

— Քուճն է ու քուճ,— կը այնդե կնիկ:

— Տե՛ր աստված, դու համբերութեն տաս:

Մարդ ու կնիկ կը կոպին, հա՛, չէ՛, չէ՛, հա՛, չը կոնա վրը կնկա լեղվին, կըրըկի, հացի չը մոտենա, շուաե, չը խմե, չը քնի, կսկծուց յիչ մնա փաթլամիշ էդնի:

Սարևիկ կը թոնա, գիկա մարդու յանկըշի մոտ, կրսե.

— էդ գործ հմալ բան մե, շուրի աչքով շտեսնաս, չըս կոնա իսպաթ էնի:

— Ըպա ի՛մալ էնիմ:

— Մանցի տուն, պալտովի, յըմեն բան քու աչքով կը տեսնաս:

— Աղեկ,— կրսե մարդ:

Օլոր օր, մարդ կը վերցու դղանակ, յանի թե պտի էրթա մեշեն, հարի դուռ կէրթա, կնիկ օր կը մտնա մառան, էդի շուտ մե ուրին կը թալե փետկի յետե, կը պալտըվի, սունչ կը թալե փոր, բաբլա կէնե, խելմ՝ յետե կը տեսնա՝ դրկեց տղամարդ ուրին թալեց տուն:

— Քա՛ տնաշեն, դքու գոտին մոռցեր էր յողա: Իմ քոռաֆամ իրիկ կլավ, տեսավ դէգ գոտին, անջախ իսպաթ էրի, օր ուր գոտին է:

— Ավտըցա՛վ:

— Ջայնամ թե, արի մեր քեֆ քաշի՛նք:

Սիրողն ու կնիկ յըմեն-օրվա պես կը նստին, կուտին, կը խմին, կը տկըղնան մտնան տեղ, օր կը մտնան՝ մարդ փետկի յետեկն ուրին կը թալե դուա, օր կը թալե՝ էդ անամոթեներ հմա տկըղ-տկըղ կը փախնին տնից կը կորին ու էն կորելն է:

Սարեկ ուր բնից կը թոնա, գիկա մարդու մոտ, կրսե.

— Է՛, բարեկա՛մ, գնա Փութկու սըր Գորգին՝ մատաղ էրե, օր քու ծուռ քելող կնիկ ուր յոտքով հեռեցավ քու տնից, քու հողին ազատավ, ըպա ի՛նչ կլնին ընոնք, օր հա՛մ կնիկ տան մեջ կը մնա, հա՛մ բողութեն կէնե, ու էնոնց խաբար տվող իմ պես սարեկ մե չկա:

¹ Գևորգին (Մ. Բ.):